



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ԳՈՒՇԱԿՅԱՆ

ԿՈՉՈՒՄԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է, ՈՐ ԿԿՍՏՆՐԵԼՆԳՈՐԺԵ ՄՆՐԴԸ

(Այլակերպության տոնին առթիվ խոսումենք)

«Եւ ար՛ Երկու (Մովսէս և Նղիա) խօսէին ընդ նմա...
և ասէին զելիցն զոր կատարելոցն էր յԵրուսաղէմ»:
ՂՈՒԿԱՍ Թ. 30

1. Ավետարանական պատկերին այս պզտիկ գիծը ներշնչող է մեծավայելուչ նկարի մը շափ. խորհրդավոր տեսարանի մը հաղորդած տարտամ տպավորությանց մեկ փշրանքն է ան, որուն մեջ կշողա, սակայն, լուսի հստակ ճաճանշ մը:

2. Որեւէ մարդ, որեւէ գործիչ մանավանդ, որ գաղափարի մը հետ կապած է իր կյանքը, կամ իղեալի մը նվիրած, պետք է հաճախ ունենա աղոթքի շափ լուրջ և ինքնամփոփ պահեր, որոնց մեջ կարենա անդրադառնալ իր անձին ու գործին, իր պաշտոնին ու կոչումին վրա, լուսավորվելու համար իր պարտականության զգացումով: Հոգեկան աշխատի կացության մը անձնատուր եղողը իր մեջ հառաջ կրերե բարոյական այնպիսի պայծառություն մը, որ կրնա բովանդակապես տեսնել ինքզինքը, իր էության ամենեն մթին խորքերուն մեջ, ըմբռնել իր թերությունները, և գիտակցել իր առավելություններուն և ձգտումներուն: Ինքնամտածումի այդ րոպեն հոգիին պայծառակերպության պահն է:

3. Այդ պահը ա՛յնքան ավելի հարազատ հանդիսավորությունը կըլլա հոգիին, որքան ավելի հեռավոր հորիզոնի մը վրա կբացվի վարագույրը. որքան ավելի, անձին զգացումեն վեր՝ ցեղին զգացումը, անհատին հոգիեն վեր՝ համայնքին հոգին երևին հոն:

Մեծ մարդիկը, մեծ գործիչները, իրենց ցեղին առավելություններուն ավելի կամ նվազ փառավոր խտացումներն են: Անձի մը նկարագիրը այնքան ավելի տոկուն կըլլա և գեղեցիկ, որքան ավելի իր ցեղին առաքինություններն ու գեղեցկություններն են անոր բաղկացուցիչ տարրերը: Ճշմարտապես մեծ կրնա լինել ա՛յն անձը միայն, որ, իր կոչումին վրա մտածած պահուն, կրնա արթնցնել իր արյան մեջ նիրհող ազնվագույն հին բնազդները. որ կրնա իր խղճմտանքին մեջ կենդանացած զգալ իր պատմության փառավորագույն տիպարները:— Հոգեբանական այդ օրենքին համեմատ է, որ Հիսուսի գիտակցության մեջ կվերերևին և իրեն հետ կխոսակցին Մովսէս և Նղիա:

4. Ահա Հիսուսի հավիտենական օրինակը, որ Թաբորի բարձունքեն կավանդվի մեզի: Մովսէս և Նղիա—օրենքն ու նախանձախնդրությունը. արդարությունը և համոզումի բաշխությունը: Որպեսզի զաղափարական գործիչ մը կարենա ընթանալ զեպի իր կոչումին վախճանը, պետք է որ ունենա այդ երկուքեն. պետք է որ արդարությունը ուղղե իր քայլերը, և անկեղծությունը թռիչք տա իր հոգվույն: Այդ երկուքը ունեցող անձը միայն կրնա իր վրա փայլեցնել մեծ նկարագիրներու շնորհքը, որ ազնվություն է սրտին և պայծառակերպությունը հոգիին. առանց ա-

նոնց՝ մարդկային կյանքը կկորսնցնեն ամեն ինչ, որ գաղափարական է իր մեջ, ու կվերածվի անասնական վիճակի մը:

5. Վասնզի, ինչպես ըսված է, օրենքը պարտականությանց լույսն է, և ո՛րչափ ավելի ունենանք այդ լույսն, ա՛յնքան ավելի ընդունակ կըլլանք ճանշնալու և կատարելու մեր պարտականությունները. ու օրենք մը ա՛յնքան քաղցր է ու սրտազդեցիկ, որքան ավելի բարոյական է անիկա: Կյանքին մեջ երկու բան կա գեղեցիկ. աստեղազարդ երկինքը՝ մեր գլխուն վերև, ու բարոյական օրենքը՝ մեր ներսիդին: Արդարության սերը բնատուր զգացում մըն է սրտին համար. հոգիին ջիղն է ան, եթե հնար է այսպես ըսել: Բայց ինչպես առանց մարդանքի շուտով կխանգարվի մարդուն ջղային կազմը՝ վաճճը, նույնպես առանց օրենքի շուտով կխամբի արդարության զգացումը. ան է, որ կմտրակե, կուղղե, մշտական կանոնավորության մեջ կպահե արդարության զգացումը: Որովհետև, մինչդեռ արդարության փափազը անձնական զգացում մըն է, օրենքը, ապրված փորձառություններու, զտված և ճշտված նկատողություններու արդյունք, հանրային սկզբունք մըն է, ժամանակի և ընկերությանց շրջաններուն մեջն հառաջացած, և մեծ միտքերու հավանությունները կնքված:

6. Բայց ո՛չ արդարության սերը և ո՛չ օրենքին հարգանքը պիտի չարժեին ոչինչ, եթե բան մը, բարոյական ուրիշ զորութուն մը չփոխարկեր զանոնք կյանքի: Այդ զորությունն է անկեղծությունը, համոզումին քաջությունը: Սրտի անվերապահ հորդում, անիկա նախանձախնդրություն կստեղծ

հոն, ուր, առանց իրեն, մեռյալ տառ մը պիտի մնար օրենքը. դիմադրության անընկճելի ոգի մը կկազմե հոն, ուր, առանց իրեն, լոկ բառ մը պիտի մնար արդարությունը, ու, առաքինության այլազան ձևերուն տակ՝ փիլիսոփա կընե մաղդը բախտին. դաժանություններուն դեմ, անվհատ ու անվեհեր՝ կյանքի դժվարություններուն մեջ, ամրակուռ և աննվաճ՝ փորձությանց մոլորեցնող սադրանքներուն առջև:

7. Մովսես և Նդիա. օրենքն ու անկեղծությունը, արդարությունն ու անձնվիրությունը, այդ երկուքն է, որ կխոսին Հիսուսի գիտակցության մեջ, հիշեցնելով իրեն ծրուսադեմը, ուր պիտի երթար, վերջին անգամ սաղեմը, ուր անոնց լույսովն է, որ Անիկա ըլլալով: Ու անոնց կտեսնե լեռան ստոթաբորի փառքին մեջն կտեսնե լեռան ստոթաբորի, կյանքի դաժան դառնությանց մեջ՝ զալարվող մարդկությունը, և ավելի հեռուն՝ Գողգոթայի կախաղանը: Իր ցեղին հոգիեն փրկած զուգ մը ճիշերն են անոնք, որ իր փրկման իր փրկարար պաշտոնին գիտակցությամբ կընեն իր սիրտը, իր պարտականությանց զգացումը նորոգելով և զորացնելով Անոր մեջ: Ու իր անձին և գործին, իր ներքին և պոշտոնին վրա աղոթասույզ խոդերին և պոշտոնին վրա աշակերտները կտեսնեն այդ պահուն, իր աշակերտները կտեսնեն զինքը փառավորված աստվածային մեծվայելությամբ, վասնզի չկա մարդկային հոգիին մեջ զինքը ստուգապես բարձրացնող հոգիին մեջ զինքը ստուգապես սերն ու բան մը՝ քան պարտականության կհասցնե, կամը, որ իր կատարելության կհասցնե, կրոնական բացատարությամբ, կպայծառակերպե մարդը:

(Երուսաղեմ, «Սին» ամսագիր, 1933 թ., օգոստոս, № 8):

